




Մ. ԶԱՐԻՖԵԱՆ ՆԻ ԻՐ ԵՐԿՈՒ ՄԱՐԶԻԿ ԸՆԿԵՐՆԵՐԸ
 Նաև. Զարգարեան (ձախ, վեր), ետջ. Զուլփաեան (աջ. վար) :

(ԻՐ ՄԱՀԻԱՆ 10 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

Մատթէոս - Տրդատ Զարիֆեան ծնած է Կ. Պոլիս, Կէտիկ Փաշա թաղը, 1894 Յունւար 4-ին: Փոքր տարիքէն, իր ծնողքը կը փոխադրէ Սիլիւտար Իճատէի թաղը: Պահ մը ազգային վարժարան յաճախելէ մերթ 10 տարեկանին կը դըւի Պէրպէրեան վարժարանը:

Օր մը, դպրոցը, պակաս նօթի մը համար, իր մանուկ արժա-
նապատւութիւնը վիրավորած զգալով՝ կանյալտացնէ նօթագրու-
թեան տետրակը։ Այս դէպքը պատճառ կըլլայ որ շաբաթւայ մը
համար դպրոցէն կախակալել, իբր պատիժ։ Եւ հակառակ իր ծը-
համար դպրոցէն կախակալել, իբր պատիժ։ Եւ հակառակ իր ծը-
համար դպրոցէն կախակալել, իբր պատիժ։ Եւ հակառակ իր ծը-

ՀԱՆՐԱՊԵՏ

Զարիֆեան ըլլալով ամենափայլուն շրջանաւարտներէն մին, մասնաւոր յանձնարարութիւնով կը դըւի մօպէրթ Գօլէճ, հետեւեալ մասնաւոր երկրաչափական մասնագիտական ճիւղին, որուն մեծ հակում ունէր։ Սակայն երկար չի մնար Ռօպէրթ Գօլէճ, կը վերադառնայ կրկին Պէրպլէրեան վարժարանը եւ զայն կաւարտէ փայլուն կերպով, 1913-ին։

*) Այս տարի ապրիլին լրացաւ Մ. Զարիֆեանի մահւան տասը տարին: Մի քիչ ուշ քեւեւ տալիս եմք կենսագրական սոյն ուրւագիծը: Զարիֆեանի ստեղծագործութեան նւիրած ուրիշ ուսումնասիրութիւններ էլ կը տրւի «Վէմ»-ում: ԽՄԲ:

Զարիֆեան Պէրպէրեան վարժարանին մէջ հետեւած ըլլալով դրական ճիւղին, իբր աւարտական շարադրութիւն, Օրմանեան սըրբազանին ներկայութեան, գաղղիներէն լեզուով, աստուածաբանութեան քննութիւն կանցնէ եւ կարժանանայ սըրբազանին մասնաւոր հիացման եւ գնահատանքին:

Զարիֆեան կը մասնակցի Չունդեան կտակի մրցման. հակառակ առաջինն ըլլալուն, ընկալեալ սովորութեամբ, կողմնակցութեամբ մը կը զրկւի Եւրոպա ուսանելու դնալու իր մեծ փափաքէն:

Ինչպէս քիչ վերեւ կըսէի, Զարիֆեան ի յայտ եկած էր նաեւ իբրեւ առաջնակարգ մարզիկ մը ամերիկեան բարձրագոյն վարժարանին մէջ:

Այդ շրջանին, ուր Զարիֆեան կը նետէր մարզական ասպարէզ, մարզանքը նորութիւն մըն էր հայ ժողովուրդին համար, բայց իրականին, վերածնունդ մը, որ կը ծլէր ու կը զարգանար հայ ազատատենչ ու արի երիտասարդութեան մէջ:

Այդ առեւնայ հայ մարզական աշխարհի ռահվիրաներէն առաջինն Պէրպէրեան վարժարանին մէջ պր. Արամ Նիկողոսեան եւ Լեւոն Թաշճեանն էին, որոնք ձեռնհաս մարզիկ, կարող ուսուցիչներ, նոր սերունդ մը հասցուցած էին թրքական սահմանադրութիւնէն առաջ եւ մանաւանդ վերջը: Այն առեւն ուր Եւրոպայի մէջ շատ մը երկիրներ, մէջն ըլլալով եւ Ֆրանսան դեռ շատ հեռու կը մնային այդ շարժումէն, հայերը արդէն ունէին իրենց ներկայացուցիչը Սթօքհոլմի միջազգային ողիմպիականին, 1912-ին, զժրախտարար թրքական դրօշով, երկաթի, սկաւառակի եւ լողալու մրցումներով, յանձին Մկրեանի եւ Փափագեանի:

Այդ սերունդի ամենակատկառուն դէմքերը եղած են՝ Շաւարշ Քրիսեան, Մեծ Նդեռնին նահատակած, իսկ վերապրողներ՝ Մկր. Մկրեան եւ Գրիգոր Յակոբեան, արդի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն, ու ասոնց շարքին ամենակրտսերը Զարիֆեան, որ լաւ մարզիկի մը համբաւը կը վայելէր 1911-էն ի վեր Պոլսոյ հայ եւ միջազգային մարզական շարժման մէջ:

Զարիֆեան եղած է Մկր. Մկրեանի 1907-ին Սկիւտարի մէջ հիմնած Բաֆֆի Հ. Մ. Միութեան ամենէն լաւ անդամներէն մին: Ան եղած է առաջին ասիոյեանը հայ առաջին ողիմպիականին. երկար տարիներ ասիոյեան մնացած է Պէրպէրեան վարժարանի տարեկան Նաւասարդեան խաղերուն: Իսկ յաջորդ տարիներու սարքւած հայ ողիմպիական խաղերուն, շատ յաճախ, ունեցած է առաջնութիւններ: Իր մրցանիչներուն ամենէն լաւագոյնն էր 3 քայլ հեռաւորութիւն ցատկելը, զոր կը պահէր 1912-էն ի վեր: 1921-ին, երբ իր ձեռ-

քէն կը խլէին, մանուկի մը պէս կուլար տեսնելով իր մրցանիչներուն վերջինին պատենէն վար առնելը: Զարիֆեան կատարեալ մարզիկ մ'էր, ամէն ճիւղի մէջ. կարճ վաղքեր 100, 200, 400 մէթր. եւ հեռաւորութիւններ ցատկել իր մասնաշաղկապութիւններն էին. ունէր նաեւ մասնաւոր ձիւք, զնդի, սկաւառակի եւ նիզակի համար: Բաւին բովանդակ առումով եղած է *Athlète complet* մը. իր մարմինը կերտած արձանի մը մարմնացումն ունէր, գերազանցապէս ազնւական շարժումներով եւ գեղեցիկ ինքնատիպ հոգիով:

Զարիֆեան, Պէրպէրեան վարժարանը աւարտելէ վերջ, 1913-ին, մեկնեցաւ Ատանա. հոն Լէօն Լարենցի տնօրէնութեամբ եղած էր անգլիերէնի եւ մարզանքի ուսուցիչ: Սակայն, դժբախտաբար, Կիլիկիոյ տաք կլիման իրեն չատ չնպաստեց եւ վեց ամիս վերջը փոխադրեցաւ Պէյրութ, գտնելու համար իր ապաքինումը, Լիբանանի մշտադաւար շոճիներուն, կանանչագեղ մայրիներուն ու կապուտակ երկնքին տակ: Հազիւ առողջացած, Սիւլտանի կարօտէն տոչորուն, կերպէր ժամ առաջ հասնիլ իր գեղեցիկ լեւակներուն, վարդերուն ու յաւերժահարս Ռաիդին: Եւ վերադառնալով Պոլիս ուսուցիչ կըլլայ Պէրպէրեան վարժարանը:

Ընդհանուր պատերազմին, Զարիֆեան քանի մը անգամներ, նոյնիսկ իր կեանքն վտանգելով, զանազան դեղերու միջոցաւ հիւանդանալէ վերջ (զինուորութենէ դերժ մնալու համար), զինուորագրուեցաւ իբր պահեստի ենթասայայ եւ զրկեցաւ Պաղեստինի ճակատը որպէս անգլիերէնի եւ գաղիերէնի թարգման:

Զինադադարէն անմիջապէս վերջ մեկնած է փոքր Ասիա իբր կամաւոր թարգման անգլիացի ազնւատոհմ սպայի մը, որբահաւաքի եւ հայկական գաւառներու շուրջ տեղեկագիր պատրաստելու պաշտօնով:

1920-ին յանձնախմբին լուծումով կը վերադառնայ Պոլիս, կըրկին Պէրպէրեան վարժարան որպէս ուսուցիչ անգլիերէնի, հայերէնի եւ մարզանքի:

Իբր ազնաւատես մը Զարիֆեանի պատերազմէն առաջ եւ վերջին շրջանին կեանքին, ես՝ իր աշակերտը, տակաւին կը պահէի իրմէ հին մարզիկի այն մեծ հմայքը գեղեցիկ տղուն, որ այս անգամ մեզ կը ներկայանար յոգնած եւ քիչ մըն ալ նիհարեցած:

Իբր ուսուցիչ դպրոցին մէջ, ան յարգւած եւ սիրւած դէմք մըն էր բոլոր աշակերտներուն եւ իր պաշտօնակիցներուն կողմէ. չափազանց խղճամիտ, պաշտօնին կատարեալ գիտակից մը, անձնւորութիւնն ու անկեղծութիւնը իր էն գլխաւոր առաքինութիւններն էին. թիւսիրտ, նիւթապէս ու բարոյապէս կօզնէր ու կը զոհէր եթէ հարկ ըլլար նոյնիսկ:

Արդէն այս շրջանին էր որ շտուկներ կը լսէին դեռ ու դէն իր մասին. հիւանդ էր Զարիֆեան. քանի մը անգամներ ալ թոքերէն արիւնահոսութիւն ունեցած, նոյնիսկ դասերու ընթացքին:

Այլեւս մենք Զարիֆեան փոխուած կը տեսնէինք. ան պատերազմէն առաջ կեանքի մէջ էր այնքան բուռն, հեւիհեւ, խօլական, որքան վերջը հանդարտ, վիպական զեղուն խոկումի եւ մտածմանց տրտում կեանք մը ունեցաւ. մանաւանդ երբ ալ համոզուած էր որ ինք հիւանդ մըն էր:

Նախապէս, պատերազմէն առաջ, նախազգացումն ունեցած էր արդէն երբ կը գտնէր Ատանա. մանաւանդ որ այդ հիւանդութիւնը կըսկէր շատ կանուխէն, 1912-ին, երբ ան հայ երկրորդ ողիմպիականին գերբնական ճիգ մը կընէր երեք քայլի մէջ իր նախկին մըըցանիչը կոտրելու: Մէջէն բան մը փրթեր էր. եւ այս բառը շատ յաճախ մեղի կըկնած էր: Այդ դէպքն էր որ իր զօրեղ մարմնին մէջ բոյնդրած, որոշ հանգամանք կըստանար 1920-ին եւ կըսպառնար յարասեւ կրկնումներով քայքայել իր ուժեղ կազմածքը:

Հոս սակայն պէտք է խոստովանիլ, որ Զարիֆեան իր հիւանդութեան հանդէպ ունեցաւ անարդար արհամարհանք մը եւ չխնայեց ինքզինքին. գարնան թէ աշնան իրիկուններ, գեղեցիկ եւ խորունկ լուսնկայ գիշերներ կը թափառէր երկար, բաց դաշտերուն մէջ, փռէնկին լեռան վրա, Ոսփորի հայլոյն դէմ, հո'ն, ուր շատ յաճախ մայրամուտին ականատես կըլլար նայատներու պարին, երազներու մէջ ընկղմած, կը խմէր վերջալոյսի խենթեցնող գինիէն, բարձրանալու համար աստղերը. ու տարաժամ՝ ննջարան կը վերադառնար յոգնած, ուժաքամ գթութեան եւ կարեկցութեան հայցումով:

Յիշողութեանս մէջ դեռ թարմ դրոշմած կը մնան այն գիշերները, մութ եւ երկար ձմրան իրիկունները, իր միայնակ հակումի պահերուն մէջ, երբ ան լամբի տմոյն, աղօտ լոյսով անքուն, մխրճւած ընթերցման եւ երազանքի աշխարհին մէջ կողջունէր արշալոյսի առաջին շողերը:

Զարիֆեան սակաւախօս էր. կը կարդար անխոնջ եւ յամուռ-րէն. հազիւ երբեմն կը խօսէր իր աշակերտներուն մասին. կը պատմէն իր սիրած հեղինակներու կեանքը, Քառլայի, Պայրընի, Օսքար Ուայլտի, Շիլլէրի, Լամարթինի, մանաւանդ Թոլսթոյի, որուն հանդէպ մասնաւոր պաշտամունք մ'ունէր: Երաժշտութիւնը խենթի պէս սիրող մը, երբ ամէն անգամ կ'իմանար քովընտի պարտեղէն, Պէր-պէրեան վարժարանին կից, աղջկանց վարժարանէն երգի կամ նւագի ձայն մը, ինքզինքէն ելած կը վերանար արբշտութեամբ զեղուն

իր հոգին կը յանձնէր անուրջին. ու իր ցաւը մանաւանդ կօրօրէր աստուածաշունչ Շոիէնի մը երգին մէջ:

Զարիֆեանի դրական կեանքը յանկարծ սկսաւ թեթեւ դէպքով մը որ կարժէ յիշատակել: Սկիւտարը մեծ բանաստեղծներ տւած է մեր դրականութեան. հայաշատ քաղաք, զուտ հայ թաղերով, խանդավառ ամբոխ մը, աւելնով տոգորւած, ազգայնական ոգի, մանաւանդ մեծ եղեռնէն ճողորմած այդ երիտասարդութիւնը, մանուկ Հայաստան մը կուրծքին սեղմած, եռուզեռի մէջ, վերածնունդ մը կը կերտէր, կարծես բացը լեցնելու այն անհետացող դէմքերուն, որոնք նորագոյն շրջանի հայ մշակոյթին հիմքերը դրած էին արդէն: Երգն ու գիրը ամէն շրթունքի վրա, ամէն մարդ գրել կը փորձէր, գրող կը դառնար. երիտասարդութիւն է չէ՞. ո՞ր երիտասարդը չէ փորձած գրել:

Այդ տոենի սովորութիւնն էր. օրիորդներ եթէ գրել չէին գիտէր, ալպոմ կը կրէին դուռէ դուռ. կը գիմէին դրողներու, ուսուցիչներու, նոյն իսկ վարդապետներու ոտանաւոր մը կորզելու իրենց ալպոմին համար: Զարիֆեանն ալ երիտասարդ, որ մինչեւ այդ տեները եղած էր լոկ ներշնչող մը եւ յախուռն երկար ժամերու խորունկ ընթերցող մը, անմասն չէր մնացած մրտելու օրիորդի մը ալպոմին մէջ, որ իրեն ներկայացուցած էր պաշտօնակիցներէն մին. այս վերջինը փոխանակ ալպոմը աղջկան յանձնելու, ուղղակի կը տանի «Ճակատամարտ» օրաթերթին եւ արտատպել կուտայ:

Այս դէպքն զինքը շատ զայրացուցած էր. սակայն հետեւեալ օրը, երբ բազմաթիւ նամակներ կըստանար շնորհաւորական ծանօթեւ անծանօթ անձերէ, մանաւանդ օրիորդներէն, ինք գեղեցիկ սեռը սիրող մը, տեղի տւաւ այդ խնդրանքներուն՝ ու գրեց ամենուն համար, գրեց իրեն համար եւ դարձաւ քնքուշ բանաստեղծ մը:

Հոս միջանկեալ բնեմ որ Զարիֆեան, իր քաղաքական կուսակցական մարդ, եղած է Պէրպէրեան վարժարանի Հ. Յ. Դաշնակցութեան ուսանողական շարքերուն մէջ եւ հետեւաբար, լայն բարոյական աջակցութիւն վայելած է «Ճակատամարտ» օրաթերթէն տպել տալով ամէն կիրակի մէյմէկ ոտանաւորներ:

Զարիֆեանի կեանքը այլեւս փոխած էր, այդ դէպքէն յետոյ. ա'լ չէր կարդար, կը խորհէր ու կը գրէր: Ինք համոզւած էր որ հայ դրական մշակոյթի պարտէզին մէջ տուրքի բաժին մը բերած էր: Արդէն Օշական այն տոենեայ դրական ասպարէզի տիրապետող յայտնի դէմքը «Ճակատամարտ»-ի մէջ դուրստով խօսած եւ զայն դասած էր Դուրեան եւ Մեծարենցի շարքին:

Արդարեւ, Զարիֆեան յետ պատերազմեան գերողներէն ամենէն ցայտուն դէմքը եղաւ հայ գրական բանաստեղծութեան մէջ. իր գործերուն մէջ մենք կը տեսնենք Տառապանքը, Հեգնանքը եւ իր Սրտին պատմութիւնը:

Զարիֆեան սիրերգու բանաստեղծ մը՝ իր քերթածներուն մէջ կը փնտռէ գուլթի ու պաղատանքը. բնութեան մէջ, Աստուծոյ քով: Կը հեգնէ ցաւը արհամարհանքով: Կը փարի կեանքին. կը յուսայ եւ համոզումն ունի դեռ ապրելու, հակառակ իր մարտդ ճրագին:

Ունի անկեղծ զգացումներու ալլաղան երանգներ, ինքնատիպ յուզումներով եւ ապրումներով տողորուն. ու իր հոգին համակ երբէք իր երգերուն մէջ, այնքա՛ն վճիռ, այնքա՛ն դիւրասահ, որքան գլխացող վտակը որ իր խորքին մէջ կը ցոլացնէ մաքրութիւնն ու անեծութիւնը կեանքի գնացքին մէջ:

Զարիֆեան ինքզինքը երջանիկ կղզար իր առաջին հատորով, որ տպագրւեցաւ 1921-ին «Տրամութեան եւ խաղաղութեան Երգեր» վերնագրով: Իր փառքի օրերն էին. հրապուրւած էր կեանքով ու կարհամարհէր ցաւը, որ օր ըստ օրէ գինքը կը մաշեցնէր: Իր երկըրորդ հատորը «Կեանքի եւ Մահան Երգեր» զոր հրատարակեցաւ 1922-ին, դեռ չէր աւարտած, երբ արիւնահոսութեան մը յարածիւ տաղնապներէն ընկճւած անկողին կիշնայ:

Բժիշկներու յանձնարարութեամբ կը փոխադրուի Մեծ Կղզի: Հոն իրեն արգիլւած էր բացարձակապէս յուզումը, յոգնութիւնը եւ մանաւանդ մտաւոր աշխատանքը: Բայց ինք, նախկին հին օրերու խօլ տղան, իր երբեմնի խարուսիկ բաւ պահերուն մէջ, կրկին կը գրէր եւ կրկին արիւնահոսութիւն կուեննար: Առանց վարանելու կըրնանք ըսել որ Զարիֆեան իր վերջին հատորը գրած է շատ անգամ արիւնով:

Հակառակ իրեն տրւած խիստ պառւէրին, բժիշկներու կողմէ, ան կանսատէր օրէնքին, կարհամարհէր ցաւը, կուգէր փարիլ ու ապրիլ նոյն երիտասարդ կեանքը, որ սիրելի գիտէ բնութիւնը, ծաղիկները, մանաւանդ վարդը, գեղեցիկ վարդը, բուստո ու առինքնող վարդը, զոր այնքան երգած է տրամութեան եւ խաղաղութեան պահերուն: Ան, գեղեցիկ ապրիլի արեւոտ պայծառ օր մը, օր մը խաղաղութեան եւ քաղցրութեան, իրիկնամուտին, մայրամուտին հետ իր հոգին կաւանդէր ժպիտը դէմքին, ծիծաղն ու հեգնանքը չրթներուն դրոշմւած:

Գարուն գիշերով սիրտ չունի՞ս դուն տէր...:

Փարիզ.